Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի :

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում/Ձև 1/մեկ լուսանկար 3x4 չափի
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/
- Անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/
- Ինքնակենսագրություն/Ձև 5/
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ:
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթերը/առկայության դեպքում/
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել կամ համալրել դրանք:
Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր ժամը $10^{00}$- $15^{00}$ բացի շաբաթ և կիրակի օրերից և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 8-ին ժամը $14^{00}$-ին Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոցում, քաղաք Արմավիր Աբովյան 182: